



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԳՐ. ԲԱԶ. - ԱՂԱԶԱՆՆԵՐ.

1902 № 676

# ԲԱՆԱՏԵՂ ՇՈՒԹԻՒՆՆԵՐ

Քեզ ին՞չ երգեմ, կարօտ ընկեր,  
Թոյլ լարերով քնարիս.  
Ինչպէ՞ս մէկ մէկ թւեմ վշտեր...  
Ա՛խ, անթիւ են, սիրելիս...  
Գ. Բ.-Ա.



ԲԱԳՈՒ

ՏՊԱՐԱՆ Յ. Գ. ԳԻՒՂԱՍՏԱՐԵԱՆԻ.

1902.

891.99

F-17

891.93

բ-17


Գ. Բ. Ա. - Բ. Գ. Բ. Բ. Բ. Բ. Բ. Բ.

01 JAN 2008  
08 DEC 2011

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Քեզ ին՛չ երգեմ, կարօտ ընկեր,  
Թող լարերով քնարիս,  
Ինչպէս մէկ մէկ թւեմ վշտեր...  
Ա՛խ, անթիւ են, սիրելիս...

Գ. Բ.-Ա.



Բ Ա Գ Ո Ւ

Տպարան Յ. Գ. Գիւլբասարեանի.

1902.

26.02.2013

22.924

Дозволено цензурою. Тифлисъ, 19-го января 1902 года.

Մ Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ի Ն .

(Հատուած պօէմայից)

Չատ շուտ անցան իմ մանկութեան  
Ուրախ գուարթ օրերը.  
Մէկ մէկ շուտով կտրուեցան  
Կեանքիս անծայր թերերը:

Այն աղբիւր էր, որ շուտ բղխեց  
Ու խոստացաւ բազոտ ու կեանք.  
Աւաղ, շուտով նա դադարեց—  
Պատճառելով վիշտ, զրկանք:

Ա՛խ, ինչպէս ես կուզեմ նորից  
Մի անմեղ մանուկ դառնալ,  
Վազել սիրով կպչել խաղից,  
Գուցէ այժմ կշտանալ:



58353-67

Բուռն տենչով կուզեմ թողնել  
Դաժան լուծս ծանրացած,  
Ու կապանքս ջարդել, փշրել,  
Դէպ հետ վազել զրկաբաց:

Իսկ անբաժան տխուր ներկան,  
Իբրև մի ժայռ յաղթանդամ,  
Յենուած թշուառ կեանքիս վրան  
Ինձ քշում է դէպ դամբան:

Բայց քանի դեռ ուրախ սրտով  
Մանուկ էի մի կայտառ,  
Վազում էի միշտ խայտալով,  
Վազում, թռչում դէպ անտառ:

Այնտեղ գտնում ես ընկերներ  
Հասակակից եմ օրուան,  
Տեսակ տեսակ խաղում խաղեր,  
Երգում երգեր զանազան:

Իսկ կէսօրին միշտ անտառում  
Ծառի շուքում հաւաքուած,  
Պատմութիւններ էինք պատմում  
Հերթով, կարգին նստոտած:

Խէլօք, ազդու պատմութիւններ  
Մեզնում մէկը լաւ գիտէր.  
Նա դիւցազանց քաջութիւնը  
Մեծ եռանդով պատմում էր:

Հատ շատերի պատմութիւններ  
Կարճ միջոցում գիտէինք.  
Լաւ լաւ տղայք, լաւ ընկերներ,  
Մեզ մօտ շատ հաւաքեցինք:

Թիֆլիս, 20 գոստոսի 1900 թ.



**ՅՐԵՒՆ ՈՒ ԿՈՅՍ.**

Արևի վառ փայլը երկնից  
Ծովի պաղ ջուր տաքցրեց,  
Նորա կապոյտ պարզ երեսից  
Գոլորշիներ թռցրեց:

Սիրուն կոյսը, հոն դիմացես,  
Մատաղ սիրտս կրակեց.  
Արևն կտրած սրտէս պէս պէս  
Երգեր հիւսեց, ուղարկեց...

Բազու, 29-ն Ապրիլի 1901 թ.



\* \* \*

Ես երգ հիւսեցի: Վշտիս թփերից  
Մէկ մէկ քաղելով մի փունջ հիւսեցի.  
Դալկացած սրտիս փշոտ լարերից  
Մէկը պոկելով—նորան կապեցի:

Անցաւ ժամանակ. Ոչ ոքի սրտում  
Երգս արձագանք կարծես չգտաւ...  
Նոր այսօր միայն քո սիրող սրտում  
Նորան տանջանքով փայփայած տեսայ:

Բազու, 28-ն Մայիսի 1901 թ.



ԿԵՆՆՔԻՍ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆՆ.

Ին՛չ փառք ու պատիւ, պարծանք, երանիք,  
Այն կեանքի կռուի քաջ զինորդներին,  
Որոնք յաղթելով դառնութիւնք, չարիք՝  
Դառնումին ուսուցիչ զալոց սերնդին:

Իմ նորաբողբոջ մատաղ կեանքումը  
Ձեզ եմ ես տեսել, ձեզ եմ ճանաչում,  
Ձեզ եմ պարտական... Դուք էք մտքումս...  
Դուք պիտի խնդաք կեանքի խնջոյքում...

Քաղու, 1 Սեպտեմբերի 1899 թ.



ԹՈՒԻՐ ԹՈՒՉՆԵԿ.

Թուիր թուչնակ, թուիր արագ,  
Թուիր—թուչելուտ մեռնեմ.  
Թուիր այդպէս դու շարունակ,  
Նպատակիտ ես մեռնեմ:

Ճանապարհին դու աչք ածիր,  
Լաւ տնտղիր բոլորին.  
Չքնաղներից չքնաղ կոյսին  
Եթէ տեսնես—բարեիր:

Նա իմ եարն է, սիրուն եարը,  
Հոգով սիրած, պատուական.  
Նա իմ եարն է, դարդլու եարը,  
Սրտիս տէր ու տիրական:

Նորան տխուր դու կտեսնես  
Ծառերի մէջ անտառում.  
Սպասելիս կ'հանդիպես  
Նուիրական հովերում:

Տանջանքների քողի տակից  
 Նա կրկին կ'հրհրայ,  
 Էն խոժոռած երկու աչից  
 Դարձեալ հուր կ'պլպլայ:

Անթիւ բարև նորան յիշիր  
 Էրուած սրտիս խորքերից,  
 Մի գոյգ համբոյր էլ խնդրիր  
 Ինձ տեղ երկու աչերից:

Թռիր թռչնակ, թռիր արագ,  
 Թռիր—թռչելուտ մեռնեմ.  
 Թռիր այդպէս դու շարունակ,  
 Անցած ճանապիտ ես մեռնեմ:

Բագու, 31-ն Մայիսի 1901 թ.



ՆՈՒԷՐ ԵՍՐԻՍ.

I.

Անուշ հովեր, կէք տարէք  
 Էս դարդերը ծանրացած.  
 Ծովեր, պատմեմ, դուք լսեցէք,  
 Իմ ցաւերը սեւացած:

Տարէք որ քիչ թեթեւանամ  
 Միրտս կրծող մորմոքից.  
 Եկէք, պատմեմ, որ հովանամ  
 Էս հուր կրակ սե օձից:

## I I.

Հովերն անուշ գրուցելով  
 Եկան նազ ու նազերով.  
 Ծովը սրեց իւր լսելիք,  
 Ափին կամաց լափ տալով:

Դարդս տարան... բայց էլի կայ,  
 Եարար վերջը երբ կուգայ.  
 Ծովը լսեց, ալեկոծուեց,  
 Բայց, ան, վերջը դեռ չ'կայ:

Սիրուն եար ջան, դու մնացիր,  
 Դու և ծով ես և հովեր.  
 Դէպ ինձ շուտով դու մօտեցիր,  
 Դու կ'ցրես իմ ցաւեր:

## III.

Եարս լսեց ու ան քաշեց  
 Կարօտ սրտի խորքերից.  
 Նորա «ախ»ը սրտիս կպեց,  
 Տանջուած սիրտս հովցրեց:

Ախ, նազան եար, հոգուտ դուրբան,  
 Անուշ ձէնիտ եմ կարօտ.  
 Արի, արի, սիրուն եար ջան,  
 Լոյս երեսիտ եմ կարօտ:

Բախշիկ, 7-ն Յուլիսի 1901 թ.



## ՕՐ. PRESS'E-ի ԱՂԲՄՈՒՄ.

Ես քեզ ին՞չ տամ, տանջուած աղջիկ,  
Յաւերժ նուէր ինձանից.

Որ՞ը ընտրեմ, սիրուն աղջիկ,  
Որ գոհ լինես ինձանից:

Քեզ վարդ չեմ տայ, նա տանջող է,  
Սիրտդ նորից կ'տանջէ,  
Բուլբուլ չեմ տայ, նա սիրող է,  
Նա քեզ ինձնից կ'խլէ:

Գարուն չեմ տայ, թառամող է,  
Նա ինձնից շուտ կ'թողմէ.  
Ծովն էլ չեմ տայ, նա շատ խորն է—  
Նա քեզ իւր տակ կտանէ:

Երկինք չեմ տայ, նա անգութ է,  
Նա լուսթիւն կսիրէ.  
Սէր ու յարգանք նորան խորթ է.  
Մեզ նա անէծք կ'թափէ:

Լուսին, աստղունք էլ չեմ տայ քեզ.  
Նորանք ցաւ կ'նորոգեն.  
Վշտի աղբիւր չեմ բանայ քեզ,  
Կ'տառապես, խոցոտուես:

Կրծքիս տակը մի սիրտ ունեմ,  
Ոչ անգութ է, ոչ թողմող,  
Եկ ես նորան քեզ նուիրեմ.  
Նա ջերմ, անանց է սիրող:

Քաղու, 27-ն Մայիսի 1901 թ,



## ՎԵՐՋԻՆ ԳԻՉՆԵՐ.

Ծովի ափին, մութ գիշերով,  
Մի աղջիկ էր լուռ լալիս.  
Ալիքները կարեկցելով  
Գնում էին ու գալիս:

Ալիքները ափին զարնում,  
Ցայտում էին, փշրում,  
Ու աղջկայ մարմանդ աշից  
Գոհար արցունքներ սրբում:

Նա լալիս էր ու մտածում.  
Թէ երկուսից որն ընտրել.  
Արդեօք ծովի սառը զրկում  
Ցաւերժ քնով նինջ սփռել,

Թէ զոհելով մատաղ կեանքի  
Եւ վառ արեւ և զարուն—  
Չարժանանալ նախատինքի,  
Գնալ ատած ամուսնուն...

Ծովը վրդովւում էր ուժգին,  
Ափին ալիքներ լափում.  
Բայց աղջկայ խորունկ դարդին  
Ոչ մի զարման չէր գտնում:

Բագու, 12-ն Սեպտեմբերի 1901 թ.



ՀԳ-ԵՏԵՑԸ





Ծառ ու ծաղիկ, հով ու հովեր,  
Ցուրտ աղբիւրներ ին՛չ անեմ,  
Երբ անջատուած են մեր սրտեր  
Ու ես պիտի դարձ անեմ:

Սիրուն մարդեր, դաշտ ու արօտ,  
Անտառ, սարեր ին՛չ անեմ,  
Երբ որ եարիս դէմքին կարօտ  
Պիտի անվերջ սուգ անեմ:

Ա՛խ, բոլորը, էտ բոլորը  
Ասէք, ինչպէս ես չատեմ.  
Երբ զորանք են անջատողը  
Սիրող սրտերն... ոն՛ց չատեմ:

Բախչիկ, 7-ն Օգոստոսի 1901 թ.



Դարձոտ սիրտս դարման կուզէ,  
Վառ գարունը ծաղիկներ,  
Էրուած հոգիս հանգչել կուզէ  
Ու էլի նոր տանջանքներ:

Ոչ դարման կայ, ոչ էլ հանգիստ,  
Ոչ ալ գարուն ծաղկալից.  
Սիրտս էլի վայում է խիստ  
Արիւնաներկ խորքերից:

Բագու, 3-ն Ապրիլի 1901 թ.





Գարունն եկաւ, աշխարհն զարթնեց,  
Ծառ ու ծաղիկ կանաչեց.  
Բուլբուլն ելաւ վարդի թփից  
Երգեց—ալ վարդը բացուեց:

Եկաւ և իմ սիրոյ գարուն,  
Սիրտս ծաղկեց, կանաչեց.  
Ես էլ երգեր շատ երգեցի—  
Բայց, անի, եարս չլսեց:

Բագու, 6-ն Մայիսի 1901 թ.



Ա՛խ, ինչպէս կուգեմ,  
Որ մի ըոպէով  
Ես թռչուն լինեմ:  
Թռչեմ սրբն թաց  
Երկնի վրայով,  
Թռչեմ, սլանամ  
Բարձր լեռների  
Ես զագաթներով:  
Անցնեմ անտառներ  
Դաշտեր ու ձորեր.  
Անցնեմ քաղաքներ.  
Մի անգամ գոնէ  
Տեսնեմ կարօտած  
Իմ հայրենիքը —  
Վշտից տառապած.  
Տեսնեմ բարիքը  
Նորա լի ու լի,

Խմեմ աղբիւրի  
 Ջրից կաթնալի:  
 Սիրտս լիովին  
 Այնտեղ թողնելով,  
 Դառնամ վերստին  
 Լալով, վշտալով...  
 Ա՛խ, ինչպէս կուզեմ  
 Գէթ մի ըոպէով  
 Ես թռչուն լինեմ...

Քաղու, 28-ն Յունիսի 1900 թ.



ԶՄՈՌԱՅԵՑ.

Զ'մոռացայ այն գիշերը  
 Խաւար ու լի տանջանքով.  
 Եւ այն գիւթիչ սև աչերը  
 Վառուած սիրոյ կրակով:

Զեմ մոռանում պարզ գիշերուայ  
 Ունկլիք ու վառ աստղերը,  
 Կարծես պատրաստ կարեկցութեան  
 Անշարժ ու լուռ քարերը:

Զեմ մոռանալ. միշտ կ'փնջրեմ  
 Դանել նման գիշերներ.  
 Զեմ ուրանալ, միշտ կսիրեմ  
 Կոյսի սև սև գոյգ աչեր:

Թիֆլիս, 14-ն Օգոստոսի 1900 թ.

## Ա Ն Է Ծ Ք

(Աղամ Անիկից)

Ով որ պատճառ էր մեր մէջ բաժանման,  
Թող նա անդադար կրէ տանջանքներ.  
Թող անմխիթար արցունքն բաժանման  
Վառեն սրտումը անվերջ յուզմունքներ:

Ով յանցաւոր էր տխուր բաժանման,  
Թող նա տեսութեան մնայ անարժան.  
Թող որ թառամէ հեռու սիրուհուց  
Ու ճակտին կնիք կպած դառնութեան:

Բագու, 9-ն Հոկտեմբերի 1899 թ.

\*  
\*  
\*

Էս վայրկեանիս, թէ անուշ եար,  
Մօտ լինէիր թշուառիս.  
Նազան կրծքիտ, անխ, սիրուն եար,  
Թէ սեղմէիր սիրտ—հոգիս՝

Ողջ տանջանքս կփարատուէր  
Քո կեանք տուող աչերից,  
Նենգ աշխարհն էլ կփլուէր  
Էտ հուր շանթող հայեացքից:

Բախշիկ, 5-ն Օգոստոսի 1901 թ.



Ս Ի Ր Ո Յ Կ Ա Տ Ա Կ .

Գու կատակ արիւր. կարմիր վարդերից  
Ու ծաղիկներից մի փունջ փնջեցիր,  
Ու իբրև անկեղծ, սիրավառ սրտից,  
Ինձ սիրուն փնջիկն առաջարկեցիր:

Մինչ քեզնից գողտրիկ փնջիկն առած  
Հիանում էի վրան նայելով՝  
Յանկարծ շարժեցի ու նա խշխշաց  
Չինձու, անկենդան դէմքը պարզելով:

Բագու, 12-ն Մարտի 1901 թ.



\* \* \*

Արծ'իւ, էրնիկ ես լինէի  
Էտպէս բարձր ճախրելիս.  
Ամպերից վեր կթռչէի՝  
Ալիք տալով թևերիս:  
Ապա ուղիղ կթռչէի  
Դէպ այն կողմը ցանկալի,  
Ուր որ տխուր, ուր որ տրտում,  
Արտասուաթոր աչքերով,  
Լուռ նայում է իմ հուրին  
Ու սպասում իւր եարին...  
Նորա գիրկը կնետուէի  
Ես այնտեղով թռչելիս...  
Ա՛խ, թէ միայն ես լինէի  
Էտպէս բարձր ճախրելիս:

Բախշիկ, 10-ն Օգոստոսի 1901 թ.



\* \* \*

Էլ ին՞չ երգեմ... ես թառամած  
 Ցաւ ու վշտից ին՞չ երգեմ...  
 Սըտիս լարերին փոշոտած  
 Դարդոտ սրտով ոն՞ց խփեմ...:

Ուրախ երգեր... Ա՛խ, դուք անցաք,  
 Եր՞բ կուգաք... Սիրուն երգեր,  
 Ի՞նչու շուտ ինձ մոռացաք.  
 Կեանքիս արև եր՞բ կուտար...:

Բախչիկ, 4-ն Օգոստոսի 1901 թ.



\* \* \*

Դուրսը ցուրտ է, ներսը խաւար,  
 Հոգիս տխուր ու մռայլ.  
 Էլ չունեմ յոյս, չունեմ ընկեր  
 Որ խոր վիշտս փարատէր:

Էլ ո՛ւմ վշտով նորից դիմեմ.  
 Ցաւս էլ ո՛ւմ հետ պատմեմ.  
 Էլ ո՞վ մնաց... էլ ումնից  
 Յուսամ վշտիս կարեկից...:

Թիֆլիս, 10-ն Օգոստոսի 1900 թ.






Միթէ՛ վերջ արդէն ամեն տանջանքի,  
Տառապանքների.  
Մըրկուած սրտի, փոթորկող կեանքի  
Ելևէջների...

Ասէք, չքացան, արդեօք վերացան  
Աշխարհի սէրը...  
Երկինքը երկրին գուցէ մոռացաւ,  
Սէրը ուրացաւ...

Քաղու, 16-ն Սեպտեմբերի 1901 թ.



## Չ Է Վ Ի Ճ Ե Կ Ս Ի Ը Փ.

Չէ վիճակուած մարդկանց միջում  
Ինձ երջանիկ ապրելու.  
Գնամ այնտեղ, այն լեռներում  
Իմ խոր վիշտը ողբալու:

Ազատ լերան արծիւները  
Թող պտոյտ գան իմ գլխին.  
Իմ խօսքերին թող ձորերը  
Արձագանք տան միասին:

Այնտեղ վայրի ծաղիկները  
Թող ժպտան իմ երեսին.  
Ու փայլփլող բիւր աստղերը  
Վառ յոյս ցոլան իմ սրտին:

Առաւօտեան արշալուսով  
Երկինքը թող ինձ օրհնէ,  
Երեկոյեան վերջալուսով  
Խաղաղութիւն նա մտղթէ:

Եւ Երջանիկ այնտեղ կապրեմ.  
Միշտ թէ՛ն վիշտ Երգելով.  
Եւ Աստծուն անդ կաղօթեմ  
Բաց ու մարութր ես սրտով:

Բագու, 31-ն Մայիսի 1900 թ.




« Ազգային գրադարան



NL0323775

22.924



Կարելի է ստանալ.

Բազում—պ. ԹԱԴ. ԲՈՒՆԵԱԹԵԱՆԻ գրալատանոցում:  
Գանձակում—պ. ԿՈՍ. ԱՐԱՄԵԱՆԻ գրալատանոցում.

Դիմել հեղինակին՝ Ваку. Магазинь Малхазова. Григорію Вазазъ-Агаджанянцу.